**Տեղեկանք**

**«Ֆինանսական շուկայի ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման մասին» համաձայնագիրը կնքելու նպատակահարմարության վերաբերյալ**

2014թ. մայիսի 29-ին կնքված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի համաձայն՝ միության շրջանակներում ընդհանուր ֆինանսական շուկա ստեղծելու, բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկայում ծառայությունների ոլորտներում լիցենզիաների փոխադարձ ճանաչման համար պայմաններ ստեղծելու և Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով սահմանված այլ նպատակներին հասնելու համար անդամ պետությունները պետք է իրականացնեն ֆինանսական ոլորտի օրենսդրությունների ներդաշնակեցում մինչև 2025 թվականը: Այդ նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակվել է «Ֆինանսական շուկայի ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի նպատակն է կանոնակարգել ֆինանսական ոլորտի օրենսդրությունների ներդաշնակեցման գործընթացը: Համաձայնագիրն ամփոփում է ֆինանսական ոլորտում անդամ-պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցման ընդհանուր սկզբունքները, ուղղություններն ու կարգը:

Բացի այդ, Համաձայնագիրը սահմանում է ֆինանսական ոլորտի օրենսդրությունների ներդաշնակեցման գործընթացի իրականացման մեխանիզմները: Մասնավորապես՝ Համաձայնագիրը նախատեսում է, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրից 9 ամսվա ընթացքում անդամ-պետությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ պետք է մշակեն ներդաշնակեցման ծրագիր՝ նշելով անդամ-պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցմանն ուղղված աշխատանքների փուլերը և ժամկետները:

Այսպիսով, ֆինանսական ոլորտի օրենսդրությունների ներդաշնակեցման արդյունավետ գործընթացի ապահովման տեսանկյունից «Ֆինանսական շուկայի ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցման մասին» համաձայնագրի կնքումը համարում ենք նպատակահարմար:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ　　　　Արթուր Ջավադյան